ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան **02.08.2023թ.**

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) արտահերթ նիստը:

Մասնակցել են՝

Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Ս. Սահակյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող
Ս. Սարգսյան	- ԱԱՏՄ ղեկավարի պարտականությունները կատարող
Գ. Հովհաննիսյան	- ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Թ. Հակոբյան	- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետ
Է. Աստվածատրյան	- ԱԱՏՄ իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ

Չեն մասնակցել՝

Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Օրակարգի հարցեր.

1. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում թեկնածուի առաջադրում՝ ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու նպատակով:

2. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի 1-ին կիսամյակի (1-ին և 2-րդ եռամսյակների) հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում:

3. Այլ հարցերի քննարկում:

Ա. Ավանեսյանը առաջարկեց հաստատել օրակարգը:

Խորհրդի անդամները միաձայն քվեարկությամբ (9 կողմ) օրակարգը հաստատվեց:

1. Քննարկվեց օրակարգի հարցը՝

- Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում թեկնածուի առաջադրում՝ ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու նպատակով:

Ա. Դանիելյանը առաջարկեց որպես ԱԱՏՄ ղեկավարի թեկնածու առաջադրել Սլավիկ Սարգսյանին, քանի որ երկար ժամանակ վերջինս կատարել է ԱԱՏՄ ղեկավարի պարտականությունները, որի կատարած աշխատանքները բարձր է գնահատում, հաշվի առնելով ներկայացված հաշվետվությամբ պարզ երևում է համեմատական ցուցանիշները, թե ինչ առաջընթաց է ունեցել տեսչական մարմինը վերահսկողության գործընթացում: Նշեց, որ Սլավիկ Սարգսյանը բավականին հետևողական ստուգումների արդյունքների վերջնական նպատակին հասնելու գործառույթ է իրականացնում, որի նպատակը նաև օրենքի պահանջների կատարման ապահովումն է, այլ ոչ թե տուգանելը:

Ս. Սարգսյանը ներկայացրեց իր ինքնակեսագրականը: Նշեց, որ ավարտել է Երևանի պետական բժշկական համալսարանը՝ բակալավր ընդհանուր բժշկության ֆակուլտետը և նույն համալսարանի հանրային կառավարում մագիստրատուրան: Մինչև ԱԱՏՄ ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվելը զբաղեցրել է «Ալֆա-ֆարմ» դեղատնային ցանցում որպես վաճառող, հետագայում «Ֆարմազեթ» դեղատնային ցանցի վաճառքի տնօրեն, ցանցը բացվել է իր ներդման արդյունքում, որից հետո նշանակվել է ԱԱՏՄ-ում որպես փորձագետ, հետո՝ ԱԱՏՄ ղեկավարի տեղակալ: 2022 թվականի նոյեմբեր ամսից ղեկավարի պարտականությունների կատարումը դրվել է իր վրա և մինչ այժմ ապահովում է այն:

Ա. Դանիելյանը հարցրեց, այն դեպքում, երբ Ս. Սարգսյանը աշխատել է դեղատների ցանցերում և հիմա իրականացնում է վերահսկողության գործառույթներ, արդյոք չունի կաշկանդվածություն և որևէ շահերի բախում առկա չէ:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ չունի որևէ կաշկանդվածություն և բացառում է որևէ շահերի բախում: Եղել են դեպքեր, երբ նախկին գործընկերների նկատմամբ վերահկողության արդյունքում կիրառել է տուգանքի միջոցներ:

Ա. Դանիելյանը խնդրեց ներկայացնել Ս. Սարգսյանի ձեռքբերումները, որոնք վերջինիս վստահություն են տալիս համոզվելու, որ կկարողանա աշխատել որպես ԱԱՏՄ ղեկավար:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ կարելի է ձեռքբերում համարել Խորհրդի նիստի այն հարցերը, որոնք տարիներ շարունակ արձանագրվել են և լուծում չեն ստացել, իսկ վերջին վեց ամսում այդ հարցերը լուծվել են: Այդ հարցերից են, օրինակ գործուղումների ավելորդ ծախսերի, ստուգումների ժամկետների և եռամսյակային պլանավորման կատարման հարցերը և այլն:

Ժ. Մայիլյանը նշեց, որ նախորդ նիստերի ժամանակ հաճախ է քննարկվել, որ տեսուչների թերությունների պատճառով ունեցել ենք պարտված դատական գործեր և արձանագրվել է, որ մասնագիտական ներուժի հզորացման անհրաժեշտություն է առկա: Հարցրեց, թե նշվածի հետ կապված Ս. Սարգսյանը ինչպես է պատկերացնում հետագա անելիքները:

Ս. Սարգսյանը նշեց, որ այժմ դատական պարտված գործերի ցուցանիշը նվազել է, իսկ վերապատրաստումները իրականացվում են գործընկերների հետ, նաև նախատեսվում է իրականացնել խորհրդատվական աշխատանքներ ԱԱՏՄ տարածքային կենտրոններում աշխատող տեսուչների հետ, որի ժամանակ իրականացվելու են բացատրական աշխատանքներ կապված դատական գործերի վերլուծության արդյունքների հետ:

Ա. Ավանեսյանը խնդրեց ներկայացնել Ս. Սարգսյանի կողմից նախատեսվող տեսլականը կապված ստուգաթերթերի և ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության հետ, քանի որ ինչքան էլ մարդկային ներուժ ընդգրկվի տեսչական մարմինների գործունեությանը, միևնույն է հնարավոր չէ վերապահված ոլորտում տնտեսավարողներին ամբողջությամբ ընդգրկել վերահսկողության դաշտ, քանի որ այս դեպքում կարևոր է մեթոդաբանությունը և ճիշտ թիրախների վերահսկողությունը, որն էլ իր հերթին նպաստում է ընդհանուր համակարգի օրինապաշտության բարձրացմանը: Կարևորեց, որ ստուգաթերթերում պետք է լինեն այն թիրախային հարցերը, որոնց վրա պետք է աշխատել, ինչպես նաև ռիսկի վրա հիմնված մեթոդաբանությունում փոփոխություններ կատարելուն, քանի որ այժմ բացերի պատճառով միևնույն կազմակերպությունները օբյեկտիվ պատճառներով կրկնակի հայտնվում են ստուգումների դաշտում:

Ս. Սարգսյանը մեթոդաբանության կապակցությամբ նշեց, որ ձեռնարկում է համապատասխան միջոցներ, մասնավորապես դրա հետևանքով ավելորդ մարդկային ներուժի ընդգրկումը և պետական բյուջեի վատնումը բացառելու ուղղությամբ, և ժամանակի ընթացքում հարցը կկարգավորվի: Ստուգաթեթերի բարձրացված հարցի կապակցությամբ նշեց, որ առկա են որոշ հարցեր որոնք չպետք է ընդգրկված լինեն, առկա են նաև որոշ ստուգաթերթերի բացակայություն և հարցը լուծելու նպատակով կարծում է, որ պետք է ստուգաթերթերը օպտիմալացվեն, իսկ թվայնացումը կբերի այդ օպտիմալացմանը:

Ա. Դանիելյանը նշեց, որ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը լրամշակվել և ներկայացվել է շահագրգիռ մարմիններին

կարծիքի: Այժմ նախագիծը գտնվում է ՀՀ արդարադատության նախարարությունում և նախատեսվում է, որ այն վերջնական կհաստատվի նոյեմբեր ամսին: Կարևորեց այն հանգամանքը, որ լավագույն մեթոդաբանություն ստանալու ուղղությամբ պետք է նաև քաղաքականությունը մշակող մարմինների աջակցությունը, ինչպես նաև արդյունք ստանալու ուղղությամբ ռիսկի գործնական գնահատման իրականացումը՝ արդեն իսկ հաջորդ տարի այն կիրառելու նպատակով:

Ա. Ավանեսյանը խնդրեց Թ. Հակոբյանին ներկայացնել առկա խնդիրները, որպեսզի պարզ լինի հետագա աշխատանքների անհրաժեշտությունը՝ ԱԱՏՄ-ի կողմից իրականացվող գործողությունների իրականացման ուղղությամբ պահանջատեր լինելու և աջակցելու նպատակով:

Թ. Հակոբյանը նշեց, որ Խորհրդում պայմանավորվածություն էր ձեռք բերվել՝ ԱԱՏՄ որակի ապահովման վարչության կողմից կազմված եռամսյակների հաշվետվությունները աշխատանքային կարգով Խորհրդի անդամներին ներկայացնելու վերաբերյալ, որի արդյունքում, եթե առաջանում է հաշվետվությամբ առկա խնդիրները հրատապ կարգով լուծելու անհրաժեշտություն, ապա կձեռնարկվեն համապատասխան միջոցներ և կիրավիրվեն Խորհրդի նիստեր: Առաջարկեց պայմանավորվածությունը ուժի մեջ թողնել: Ս. Սարգսյանի վերաբերյալ նշեց, որ վերջինս բավականին կառուցողական մոտեցմամբ է տրամադրված, որի հետ աշխատելը հեշտ է և ներկայացված հաշվետվություններում արձանագրված խնդիրները (ավելորդ գործուղումների արդյունքում վատվող գումարներ, ստուգումներին տեսուչների ոչ համարժեք ներգրավվածություն, ստուգումների ծրագրի հիման վրա եռամսյակային սխալ պլանավորումներ, միևնույն տնտեսավարող սուբյեկտների ներառումը ստուգումների ծրագրում, ստուգումների ընթացիկ գործընթացում մի շարք կրկնվող խնդիրներ, աշխատողներին կարգապահական ոչ համաչափ տույժերի կիրառում), որոնք երկար ժամանակ լուծումներ չեն ստացել, Ս. Սարգսյանի կողմից լուծվել են:

Ռ. Սարգսյանը նշեց, որ աշխատանքային փորձի արդյունքները ցույց են տալիս, որ Ս. Սարգսյանի կողմից կիրառվող միջոցների առաջընթացը ակնհայտ է՝ կարևորեց ԱԱՏՄ ղեկավարի հետ աշխատանքը, քանի որ վերահսկողության արդյունքում արձանագրված խնդիրները, դրանց վերհանումը և դրանց մասին քաղաքականության մշակման դաշտում տրամադրվող տեղեկատվությունները կարևոր են լավագույն արդյունքի հասնելու համար:

Ա. Ավանեսյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի հարցին միաձայն քվեարկեցին կողմ (9 կողմ):

2. Քննարկվեց օրակարգի հարցը՝

- ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի 1-ին կիսամյակի (1-ին և 2-րդ եռամսյակների) հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում:

Ս. Սարգսյանը ներկայացրեց ԱԱՏՄ 2023 թվականի 1-ին կիսամյակի (1-ին և 2-րդ եռամսյակների) հաշվետվությունը՝ նախատեսված, իրականացված և չպլանավորված ստուգումների, դրանցում ընդգրկվող ոլորտների, չիրականացված ստուգումների պատճառների, ստուգումների քանակի, վարչական վարույթների, մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից ծխելը արգելող ցուցանակների փակցման նկատմամբ վերահսկողության վերաբերյալ: Շեշտեց, որ այդ մասով հիմնական թիրախային կազմակերպություններ ընտրվել են հանրային սննդի կազմակերպությունները, որի արդյունքում հայտնաբերվել են խախտումներ և կիրառվել պատասխանատվության միջոցներ: Արդյունքում խախտումների քանակը նվազում է:

Տ. Քեյանը հարցրեց, թե ինչու են թիրախավորվել հանրային սննդի օբյեկտները, այլ ոչ թե օրինակ մարզասրահներ կամ պետական մարմիններ, այլ հանրային վայրեր:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ հանրային սննդի օբյեկտներում ծխելու հավանականությունը ավելի բարձր է, քան այլ օբյեկտներում:

Ս. Սահակյանը նշեց, որ հանրային սննդի կետերը ամենառիսկայիններն են:

Ա. Ավանեսյանը նշեց, որ հարցը նրանումն է, որ տեսչական մարմինը չի կարող իր ռեսուրսներն ուղղել բոլոր օբյեկտների նկատմամբ և պետք է որոշի առաջնահերթություններ: Կառավարության կողմից ներդրված նոր քաղաքականությամբ պայմանավորված և մշակույթի ներդրման նպատակով հանրային սննդի օբյեկտները հանդիսանում են առավել ռիսկային, որտեղ մարդկանց ծխելու հավանականությունը առավել հաճախ է: Առաջին հերթին պետք է այդ օբյեկտները դարձնել վերահսկողության առարկա: Նաև նշեց, որ պետական մարմիններում էլ են իրականացվել վերահսկողական աշխատանքներ:

Ա. Դանիելյանը նշեց իրազեկման անհրաժեշտության մասին, շեշտը դնելով այդ աշխատանքների վրա և ռիսկային խմբերը որոշելով թիրախավորված տեղեկատվությունը հասցնելով տնտեսավարող սուբյեկտներին: Առաջարկեց ներկայացնել ԱԱՏՄ տարեկան ծրագրում համապատասխան փոփոխությունների առաջարկ իրազեկման աշխատանքները ավելի արդյունավետ դարձնելու համար:

Ս. Սարգսյանը նշեց, որ ծխախոտի հարցով իրազեկման աշխատանքները իրականացվել են Պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցությամբ՝ տնտեսավարող սուբյեկտներին իրազեկելով համապատասխան պահանջների մասին: Վերահսկողության գործողությունները սկսվել են տնտեսավարողներին իրազեկելուց հետո մեկ ամիս հետո, որի արդյունքում կիրառվել են տուգանքներ: Իսկ թիրախային խմբերի շրջանակներում, օրինակ բժշկական կազմակերպությունների, բժիշկների, մանկապարտեզների համար իրականացվում են համապատասխան իրազեկումներ: Նախատեսվում է նաև իրզեկման աշխատանքներ իրականացնել շրջանավարտների համար:

Ա. Ավանեսյանը նշեց, որ իրազեկման արդյունքները պետք է այնպիսի լինեն, որ հետագայում տնտեսավարողները իրենց նախաձեռնությամբ հայցեն իրենց համար իրազեկումներ կազմակերպելու մասին:

Տ. Քեյանը խնդրեց պարզաբանել կարճված վարչական վարույթների վերաբերյալ:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ վարույթները կարճվում են մի քանի հիմքով: Հիմնականը վարույթի ընթացքում խախտումների վերացումն է, որի արդյունքում վարույթը կարճվում է, քանի որ արդյունքում դրանք վերացնելու ուղղությամբ առաջադրանք տալու նպատակը վերանում է, սակայն նման դեպքում անցում է կատարվում վարչական իրավախախտման դաշտ, որի արդյունքում կիրառվում է տուգանքներ:

Ա. Ավանեսյանը առաջարկեց Ս. Սարգսյանին մեկ ամսվա ընթացքում աշխատանքային կարգով Խորհրդին ներկայացնել վերհանված խնդիրները և առաջիկա անելիքները ժամանակային բաժանումներով, որպեսզի Խորհուրդը հասկանա, թե ինչ է լինելու առաջնահերթությունները, որ տարվա ավարտին առկա լինի արձանագրելու կետեր:

Որոշվեց.

1. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնել Սլավիկ Սարգսյանի թեկնածությունը:

2. Ընդունել ի գիտություն ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի 1-ին կիսամյակի (1-ին և 2-րդ եռամսյակների) հաշվետվությունը:

3. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները կատարող Ս. Սարգսյանին՝ 1 ամսյա ժամկետում Խորհրդի անդամներին ներկայացնել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերհանված խնդիրները և դրանց ուղղությամբ առաջիկա անելիքները վերջնաժամկետներով:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ